





ԶՄԻՌՈՒՄ 1 ՀԱՅԱՍՏԱՆԻ 1862

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԳԻՆ՝ 3. 50 ՂԸ՝ ՀԱՍՏ. ԲՂՂ

ԴԻՄԱՐՈՒՄ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ ՕՐԸ ԷՆՂ
ՏԵՂԵՆԻ ԳԻՆԻ Է ԱՄԵՐԻԿԱՆ
ՏԵՂԵՆԻ, ԵՎ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ
ՏԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ
ՏԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ



(*)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԻՒՆ

Այս ԿԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ
ՏԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ
ՏԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ
ՏԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ
ՏԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ
ՏԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ
ՏԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ
ՏԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ
ՏԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ
ՏԵՂԵՆԻ ԴԵՂ ԽԱՆՈՒՄԻՆԻՔ

ՆԵՐԱՆՈՒՄԻՆԻՔ

Ներառյալ լինելը, իր ամեն ըն-
դարձակ խմբում, կը ցույց տա-
յայն գիտությունը, որով կամաւոր մը-
տածություններն և իրենցներն
ուրիշ ուրիշ մտածողական և ազդե-
ցական կարողություններն ունենա-
նալ բերող գործիքն է։ Հաս-
անգամ կարծես հետ համանշան է,
որն որ վերջիվերջ հետ խառնուած
գաղափարներն տեսակ մ'է։ Իր ամե-
նէ ընդարձակ նշանակությունը մէջ,
հարողություն հետ համընթաց է,
վասնզի գործի մը լեզուին մէջ ինչ
որ բաղադրանք և սեպական բան
կայ նէ, կամ իր մտածությունը մէջ
որքան վաղվառն և հարաւոր բաներ
կան նէ կը մատակարարէ իրեն։ Աս
կերպով է որ հետաքննին արհեստագէ-

տը կը թելադրէ որ բնութեան մէջ
բաղադրանք մնացած համեմատութիւնները
և տարբերութիւնները լուծէ, որպէս
զի անոնց մարդկային սեռի օգտակա-
րութիւնը բազմապատկէ։

Այս անսահման ազդեցական կարո-
ղությունն մէջն է, որ երեակայու-
թիւնը հայի հին-նորէն կը տարբերի,
որն որ նոյնպէս յառաջածական դի-
րութիւն մ'է, բայց պարզապէս կըրա-
ւորական զօրութեանակալութիւն (vir-
tualité) մի, որն որ արտագրեալ և
մասնաւոր խէնքեր առաջ կը բերէ.
ինչ ասէն առաջինը, երբոր պարզ
մտածմունքէ մ'իսկ արթննայ՝ իր ի-
տեաներուն շտեմարաններուն մէջէն
թէ նման և թէ աննման բաներու զա-
նազանութեանց տեսակները կը յըզա-
նայ։ Ասոր նայելով՝ կ'ըսուի թէ ամէն
տարիք, ամէն սեռ, և ամէն վարչու-
թեանց և կրօնքներու ուժը իր մասնա-
ւոր յաջորդութիւնը ունի, և երբոր
մարդ ճանաչել կ'ըսեն, ուրիշ բան
չէ՝ բայց եթէ ծանօթութիւն այն
վարմանց, որովք անոնց ամէն մէկը
փոխադարձաբար յաջորդութիւն ու-
նեցած է։

Խառնաշփոթ երեակայութիւնները
զանազան ձևեր և յատկութիւններ ու-
նին, ինչպէս, յնորական, կրօնադասական,
բիշոփեցական (synod)։

Մարդու երեակայական յատկու-
թիւններէն կախումն ունի իր երջան-
կութիւնը և թշուառութիւնը։ Երբոր
մարդկային յոյսերու և երկիւղներու
մէջ՝ ազդեցութիւն կ'ունենայ, զգա-

ցականութեան մ'անուն կ'առնէ, և իր
տուած կենդանի կամ արտում մըտա-
ծութեամբք՝ որովք կենաց ապագայ
տեսութիւնը կը ներկայացնէ, ամէն
հաճութեանց կրկնակի համն առնել
կու տայ, և կամ ցաւոյ ու թշուառու-
թեան աւելի հատու սայրը կը տանի։

ԹԱՂԱՆՑ ԲԱՐՐԱՐ

Քիչ մարդ կը դառնուի որ ծաղիկ
չխիբէ և ասոնցմէ շատը՝ առաւել
տեսնելը քան թէ մշակել կ'ուզէ։
Երբոր ձմեռուան սաստիկ հոգմբէն և
ձիւներէն ետք ապրիլի առատութիւն
անձրեւներուն հետ մեղմասիդ հոգմբը
կ'ըզդան, իսկոյն կ'ըսկսին իրենց ա-
ռատութեան և սիրոյ դանձրը երեան
հանել։

Հաստեան բոլոր բնութիւնը սիրելի
է և վայելելը քաղցր։ Անտեսնը ուր
որ նայիս ամէն բան փթթած կը տես-
նես, լեռներուն վրայ, ձորերուն ե-
րեսը, առուակներու եղերքը, հո-
վիտներու մէջ, բլուրները պարտա-
դաշտերուն մակերեւոյթը սիրտած.
որոնք այնպիսի կենդանութիւն մը կու
տան բնութեան, որ շատ անդայ ըլ-
լալու է մարդ որ անտարբեր կենայ։
Բանաստեղծները հազարաւոր անգամ
երգած են այն տեսարանները։ Բիւ-
րաւոր անգամ երկու տարիաւորներ
կամ բարեկամներ իրարու սիրտ յայտ-
նած են, այս անխօսիկ արարածոց մի-
ջոցաւր։

Այս սովորութիւնը շատ հին է և
իր սկիզբն առած է յԱրեւել, մասա-
ւանդ Պարսկաստան ուր չափահաս մ'իր

սրտին դադարն սիրոյն առաջին խայծը ցուցնելու համար 'ի հարկէ կ'իւլմը պիտի տար իր սրտի առարկային : Աս ծաղիկը այնքան կենդանի գոյներ ունի, զոր Պարսիկը իրաւամբ իի-լիպան ըսած են, որպէս թէ (ստուգաբանել ուղեկով) Եսի փէր կամ նոյն ինքն իի-լ (տեւ) ըսել ուղեին, որիւ առած է Լաւրոպային tulipan, որոնց երկուքն ալ իի-լիպէնք բառին շատ մօտ են :

Աս ծաղիկը որքան ալ իր յատկութիւններն ունենայ՝ երբեք վարդին չի կրնար հաւասարիլ որ 'ի հոգ անտի ' ծաղկանց թաղուհի՝ ճանչցուած է :

Պատկանց բարբառը դեռ մինչև հիմայ աշխարհի շատ կողմերը դործ ածուած է : Հարսանեաց, Խնձորից, 'Երջանատուքի, և Հանդէսներու համար յատկացած ծաղկանց արցակները՝ իրենց խորհրդաւոր նշանակութիւններն ունին :

Տարիներով դրբի մ'երեսներուն մէջ ճնշուած ծաղիկի խամրած թերթ (pétale) մը, ո'ր զիտէ ինչ բանաստեղծութիւն մ'ըրած է ատենօք, որուն տէրը սիրեցեալէ մ'առած է եղբր անշուշտ իր վառվառն երիտասարդութեան մէջ, որ այժմ՝ հողին տակ կը պառկի, և թէ որ այս մեռած թերթը այնքան անուշ յիշատակ մը յիշեցնէ, հապա որքան առաւել կենդանի ծաղիկները կրնան դեղազարդել իրենց պայծառ և կայտառ գոյներովը և հոտերովը այն դադարն լեզուն, զորն որ սորվելու համար՝ ոչ բուսաբանութիւն կը հարկաւորի և ոչ քաջանամ պարտիզպանութիւն, այլ պարզ մարդ մ'իսկ այս դուարձալի գաւառաբարբառը (idiome) կրնայ թարգմանել, կ'օգտէ որ քիչիկ մ'ըզգացում ունենայ :

Օգուշացիւր, ըսաւ խելացիին մէկը, այն մարդէն, որ ո'չ տնուշա կը սիրէ եւ ո'չ ծաղիկները : Եւ այս երկուքին ալ լեզուն խկոյն աղէկ մ'իմանալու համար, բաւական է մարդուս որ սիրաւ հար եղած ըլլայ, կամ սիրտը դիւրաւ զգաց և փափուկ :

Սոյն լեզուն այս անգամ կ'ըսկսինք մեր ընթերցողաց առջև դնելու և հետըզհետէ Արբուբենական կարգաւ առաջ կ'անցնինք, իմացնելով որ այս ծաղկանց շատը թէև մշակուած էն աս

կողմերը, այլ անոնցմէ մէկ քանինները մեր Հայրենեաց, ըսել կ'ուղեմք, Հայաստանի մէջ մշակուած չըլլալուն, ոչ մեր նախնիք և ոչ այժմանք դեռ զանոնք ճանչցած են, հետեւաբար և անուաններն իսկ դիտցած, վասն որոյ կը յարեմք իրենց նշանակութեան քով ամէն մէկին Տաճկերէն, Գաղղիարէն ու Լատիներէնները : Ոմանց Տաճկերէնները չըլլալուն ներումն կը խնդրենք, ինչու որ բառադրոյ մէջ կամ չենք գտներ և կամ "է բոյս ինչ" կը գտնենք, հետեւաբար հայերէն հընարուածները՝ Լատիներէնի ստուգա-

ՃԱՂԿԱՆՅ ԲԱՐԲԱՐԱՐ - Գոտչաճեալ անուանակոչութեամբք եւ խորհրդանշանք :

Ը

Ագաւենի	Agave	Սալ-էիւնյի	Agavó	Շրջանայեղութիւն :
Ակակիւ	Acacia	Ախսիւ	Acacia	Մարութ սէր, դադարիք :
Ակոնիտոն	Aconitum	Խանդուհիւն	Aconit	Մեղաբար սէր : Խայթոյ խղճի :
Ացուսարթա	Verbena	Միւն-էիւնյի	Verveine	Մարութ զգացմանք : Հիացումն :
Ամարիլիս	Amaryllis	Նեւիլ-լիպան	Amaryllis	Կը փայլիմ, գոտչութիւն :
Ամորէնի	Solanum	Շիւնիլ-լիպան	Morelle	Գեղեցիկ առանց բարութեան :
Այծեղբուենի	Caprifolium	Բէլ-էիւնյի	Chevrefeuille	Կապ սիրոյ : անձնանու իրութիւն :
Անանաս	Ananassa	Անանաս	Ananas	Կառայեալ եւս : Կարգաւորութիւն :
Անթառամ ծաղիկ	Amarantus	Գաւաթիկ-էիւնյի	Amarante	Անկեղծութիւն, անմահութիւն :
Անուռիենի	I. Balsamina	Գլխիւն-էիւնյի	Balsamino	Իս մի՛ գոյնի : անհամբերութիւն :
Արակիլիոս	Parietaria	Երկուսի	Parietaire	Յաւ : մարդատեղութիւն :
Առնցենի	Salvia	Քիւսի-օլիւն	Sauge	Վարկ : համարում :
Առօրաշաւան	Hemerocallis	Քիւսի-լիպան	Hémérocalle	Պշտեղ :
Աստղաւորացիկ	Aster	Կիւ-լիպան	Astéro	Ճառմարտութիւն, անաղմութիւն :
Արեւաւոցիկ	Helianthus	Կիւ-լիպան	Tournesol	Փաղաքշտն : կեղծ ինչք :
Արմուռեմարի	Aquilegia	Հասի-փի-լիպան	Ancohe	Խենդութիւն : կեղծաւորութիւն :
Արմուռենի	Phoenix	Խաւրիւ առաւել	Palmier	Յաղթութիւն : արժանաւորութիւն :

ԶԳՈՒԹՈՒԹԻՒՆԵՐ

S. Ե. 26.

13. Մեղու : Մեղուն՝ մարդկային սեռի օգտակար եղող կենդանիներէն մէկն է, վասն զի մարդուս մեղը և մոմ կուտայ, զորս ուրիշ մէկ տեղէ մը չի կրնար ժողովել, բայց եթէ ծաղկանց ընդունարաններէն (1) : Ա. Մըջեւնին չի նմանիր, որ միայն ինքզինքին համար կ'աշխատի, իր աշխատասիրութիւնը աս առաւելութիւնը ունի մըրջիւնին վրայ, որ անուշ կուտայ, մեղը է տուածը. որ շիտակը շատ մեծ յարգանք մ'է որ կ'ընէ մարդոց, թէ և իրեն մնայ բնաւին ինքզինք չի զըրկեր իր երեսի քրտինքով ժողոված ապրուստէն : Բ. Այսու յատկութեամբք դարձեալ մարդ չէ, ան թեւաւոր ու խայթոցաւոր միջատ մ'է, որ

1). Receptacle. Ասոր վրայ զետեղուած է Սխառմիւն (Torus) և ուրիշ գործարաններ, որք նեկտարաբեր են. որոնց վրայօք պիտի խօսինք 'ի ժամանակին, բաւարարանութեան մէջ :

բանութեանց վրայ յարմարցուած են : Հասարակօրէն բրդ-ած ծաղիկները մարդուս կենացը առաւին են, ինչպէս որ մեռելոց վրայ ալ կը գնեն 'ի նշան Մնացորութեան : ՊԼԸ-ՈՂ ծաղիկները փոխադարձ սէր և համակրութիւն կը նշանակեն. շրջ-ած փեթիկներ՝ արտմուծութիւն. վարսիւր ծաղիկներ՝ սուղ. ճաւաղ ծաղիկներ՝ անմահութիւն. խայթոլ փեթիկներ և փշափեթիկներ՝ յարատեւութիւն. Կորսիւն յարսեթիկներ՝ Երկապառութիւն. Յիւնիւն ճարստութիւն. և յիւնիւն-ոյ ասպը՝ Կոյնի ժաւմանակէն 'ի վեր, խաղաղութիւն :

մարդոց կանոն չի կրնար տալ, թէ և իր պատկերը՝ Կարգի և Աշխատասիրութեան խորհրդանշան (emblème) է, թէ որ կանոն առող ըլլար՝ նախ պիտ' ապսպրէր որ իր մեղը չի կողպտեն իրմէ : Գ. Աս ընելու չի կրնալուն՝ իր խայթոցը դործ կ'ածէ որ արգելք ըլլայ : Մարդիկ այս խայթոցով արգելելու համար, Գիմակ հնարած են, որ յապահովի իր անուշ անուշ մեղը փելիկն ու լափիկն ու աղօթեն որ յաւիտեանս կեայ, բայց չի խայթէ : Մեղուի մը խայթուածքը վտանգաւոր չըլլար. թէ որ իր խայթոցիկը մարմննոյն մէջ ձգած է խնամով մը հանելու և ջրով կամ լիմոնաջրով լուալու է, որով կ'աղէկնայ ցաւած տեղը : Դ. Քիւս անգամ կը սրտաւհի որ մարդուս վրայ յարձակի խայթելու. ինչու որ, խելքը չիզգալուն, ըստ որում կենդանի է, ով որ իրեն մօտ տեսնէ՝ կարծէ որ փեթակը պիտի յափշտակէ : Մովսէս, ապսպրած

զերուն պէս ուժեղ կ'ընէ :

Հարկն նշան չապար

Վայեցէք դեռ կը կանչէ, — թող
տուէք ձեռքերս, ընկերք . —

Եւ զնոնքն ապրելով

Ճշմարիտ կ'ըսեմ, ինչ արդեւք ըլլո՞ւ
զին հողին կ'առնեմ . — ետ քաշուե՞
ցէք, քովս մի գար . — առաջ քան
ես ալ ետեւեդ կու գամ :

Հարկն ու համէք ինչեք

Որքա . խեղճը, երեւակայութեամբ
քը յոստահատութեան մէջ կը շփովի :

Մարկ . Ի՛նչ ետեւէն երթանք . աս
կերպով իրեն հնազանդութիւն ցուցը
նելը վայելուչ բան չէ :

Որքա . Ետեւէն ինչինք . — Վայինք
սղոր լերջն ուր պիտ' երթայ :

Մարկ . Ընտան շփութեան մը
ծաղի պիտի Դանիել մէջ :

Որքա . Ըստուած կ'առաջնորդէ :

Մարկ . Չէ կ'ըսեմ, ետեւէն եր
թանք :

Ինչեք

(Հարսնակէի) :



ԹԵՐԹ ԱՓԵՂՅՈՒՆԱԿԱՆՆԵՐ

ՈՍԿԻ ԿԱՆՈՆԱՐ ԱՓԵՂՅՈՒՆԱԿԱՆ

Տ. Մարգարէականութեանը ուժ պաշտօն համար, ինչ բար
որ ուղեւ ինչպէս հարեւր :

Չ. խիստ մեծ համբերութիւն պէտք է լինայ երբեմն
խոնարհութեամբ .

10. Թէ որ մէկ ուղեւով իմ ետեւով ինչ պատ
ուելն եւ ինչպէս երթել :

11. Թէ որ երբեք իմ տեւի պարտաւորութիւն մէկն
Ամենայնի հետ ինչ երթել ուղեւ . Ամենայնի հետ
համաձայն հետ ինչ երթել . (Հարսնակէի)

ԱՊՐԱՆՈՒԹ

Թէ որ ապրուր աղուրն է ըսեմք և
ճարտան ալ ճղիւնք, երկուքը մէկէն
պէտք էր առնէինք ճարտանի տեղ :
Թէ որ ճարտանը ճարտանով թան
մ'է, ո՞վ պիտի համարձակի համը նա
յելու, և թէ որ մարդ մը համը չի
նայէր, սուտ խօսացած չիպիտ' ըլ
լայինք Դիմակին Վախաբանութեան
մէջ :

Ապրուրը տաճկերէնի մէջ ալ
զործածուած է, Ավարդովը և եր
բեմն ալ Օւսթուրովը և Օւսթուր
ընկեր բառերով, որոնք որ Անաթո

լի մէջ խիստ շատ խօսակցութեանց
մէջ կը մտնեն . կ'երեւի որ երկու ազգ
իրարմէ փոխադարձաբար դողցած են :

Ասոնց պիտի մօտ գրացինէ ab hoc
et ab hac (ապր. էի ապր.) բառը,
որ խառնիխառնախօսաբար կամ շաղ
փաղաբարբանջօրէն կամ փու
ճումնաճոյնուց նշանակել կ'ուզէ .
գրացի է ըսինք, վասն զի թէ արտա
սանութեամբը և թէ նշանակութեամբը
սերտ խնամութիւն ունին իրարու հետ :
Ասոնց ամէնուն աղբիւրը Charivari
է կ'ըսէ Երեւակայութեանց Արձեռնա
տետրը (manuel), որու առայժմ
խառնաշփոթաբար թէ յարմարաբար
ԱՓԵՂՅՈՒՆԱԿԱՆ, ըսինք :

Ապրուրը ալ կ'երեւի Ափեղ
ցիկի աղճատեալը կամ Տաճկերէնը
կամ դաւառականն է :

Ապրուրը իր իմաստովը և ե
րեւակայութեան Ափեղցիկին աղգական ըլ
լալով կը վայել որ երբեմնակի Աթոռ
մը պարաստենք իր 'Ճարտանի Աւա
նի' գլուխը :

ՃԱՊԱՆԱԿԱՆ ՍԵՂԱՆԵՐ

Կանոնաւոր շարժապիտութիւնք .

Յունական մը բոլոր Հայաստան
ժուռ գալով զարմացեր է, որ ինչ
պէս կրցեր են իմանալ որ ինք Հայ
չէ, թէ և շատ դուռ հայերէն ալ կը
զրուցէ եղեր : Խեղճը չիկրցեր է մը
տածել որ ջուրը չիկրցեր է երբեք չի
տակ հնչել այլ ծառ հնչեր է : Ի՛նչ
ընքա, Եւրոպայի համար համար նէ ըսելու
տեղ Եւրոպայի համար նէ կ'ըսէ եղեր :
Ճարտանը ծառ կամ ցանց . Եւրոպայի
ղախոր (եղական բառ՝ որ մեր լեզուէ փոխ
առած է դաւառականութիւնին) համար
Եւրոպայի պոչ . հայը և իսլամը միա
կերպօրէն խառն . Ի՛նչ գիտ . Եւրոպայի
ըսելու տեղ, Եւրոպայի է, և ջուրը ը
սելու տեղ՝ սուր կ'ըսէ եղեր :

Հիշեցայ Եւրոպայի մը անդադար Գո
պի՝ պոչալուսն, քանի մը կատակա
սերներ քովը կ'երթան և պատճառը
կը հարցունեն, որ կ'իմացնէ ինչեք
թէ տաճկի մը զինք դողցած ըլլալով,
վերջապէս երբոր քանի մ' օր ետք
երեւան կ'ըլլէ՝ կընայի որ մէջքի Գոպի
չիկար, վասնորոյ կը սղոսայ եղեր որ
տան իրեն զան :

ԵՐԵՎԱՆԱԿԱՆԱԿԱՆ ԱՍՊԱՐԵՐ

Անկողար, անկէտ, անսահման է :

(Հարսնակէի թիւնը պարսկերէն է) :

ԹԻՖԼԻՍԻ ԴԱՐՈՒՆ ԵՒ ՏՄԱՐԿԱՆ ԹԵՐԱՐԱՐ

Չիմանալ ինչից է Կիւրէն Եւրոպայի

Անճարի-Գամ, Գմ, Գու, Գեմ, Գեմ Գիմակի
Ինչ բարբառս կը թուցանի,

Բազի բազի բազ բազարդիս .

Այ բազարդիս մեղաւրդիս .

Խալիպոյ, բեքի, ինչ ճղալիս .

Մեք Եւրոպայի մեք ճղալիս .

Գոն ճղալիս ճղալիս ի քիս .

Ճիմիս քիսիս բեքի, ճի քիս :

Անկէտ - Տան, Եւրոպայի, Եւրոպայի, Եւրոպայի
Երեւան Գիմակի մեղաւրդիս .

Անկէտ - Անկէտ, ինչ ճղալիս .

Անկէտ - Անկէտ, ինչ ճղալիս .

Անկէտ - Անկէտ, ինչ ճղալիս .

Անկէտ - Անկէտ, ինչ ճղալիս .

Անկէտ - Անկէտ, ինչ ճղալիս .

ԴԻՐԻՔՆ ԱՆԱԿԱՆ

Իմ առաջին Կայ ապրուր,
և վերջին և շարժապիտ .
և բոլորն շարժապիտ ու յուր
ընկերէն վեր մարդոց տուալ :

ՀՅՈՒՄՈՐԱԿԱՆ ԲԱՐԴԱՆԱԿԱՆ

Ուսանողի շարժապիտ

Ասոնց ընկերութեան արքայութիւն
երթան իսկ չուղեր մարդ :

— Երեւ միայն ինքնիրեն կը շար
ժի և մարդ չիկրցար դուրս իրեն :

— Դաւանակէն մեծ վարժապետ չի
կայ աշխարհի մէջ :

— Թէ որ խեղճը վարժապետ ըլ
լային և փախուկները վարժապետ,
դարձեալ վարժապետ իր ո՞ճը չպիտի
փոխէր :

— Համեստութեամբ մուրալը պար
կեշտութեամբ դողալիս և անպատու
ութեամբ աղբիւրը դուրս էր :

Խոլճմոտանք ծալլելը, լալ ծալլելու
պէս է արդեօք :

— Ճշմարիտ բարեկամութիւնը դեռ
աշխարհք եկած բան չէ : Ատենօք
կար ճշմարիտ բարեկամութեան մօտ
բարեկամութեան ցեղ մը, որ նախ
քան զղաւակ մը ծնելը՝ մեռաւ :

— Անկէ աղէկ է մեռնելով յոյս

Թշնամաց օտքերուն տակ կը կոխկըր-
տունին, և աս օտնկոխութեան հե-
տևութիւնը վերինին յարմար կընանք
ցուցնել:

Գանք իրենց տը վրայ: Մենք աշ-
խարհի համասեռ ստեղծութեան
ենք, աւելի ըսեմ, ազգակից եղ-
բայրներ ենք, և ալ աւելի կ'ուզես
նէ միարիւն հաւատակից Քրիստոնեայ
եղբարք, ուրեմն ինչու համար մէկ-
զմէկ խածխծեմք, ինչ է պատճառը
որ մէկզմէկ կը նախատենք, կը զրպար-
տենք, կ'անպատուենք, մենք այնպէս
կարծենք որ այս գէշութիւնը ուրիշ
բանէ առաջ չի գար բայց եթէ հար-
տարսի և Ալեկտոնի Աղջկան գրգմա-
նէ, որ պինտ ընտանեցած է մեր աղ-
ջին հետ հազար սյրքան տարիէ ի
վերէ:

Ինչ պիտի պատասխանեն արդեօք
այն աղնուականները որ աստիկ չնչին
խնդիրները իրենց օրադրաց պինտ
կարեւոր նիւթերը սեպիւղով կը քրտը-
նին կը տքնին որ իրենց ստորագրող-
ները ձանձրացնեն, որոնք բան հաս-
կընալու համար ստորագրուած են
(Թէև ոմանք միայն կ'ուր կարգալու
համար կ'ըստորագրուին) քան թէ կը-
ռիւ լսելու:

Մարդ դուն քու ազգդ կը թելու-
ելերես, դուն քու պաշտօնդ նայէ,
ինչ ելերես քու եղբորդ տունը կ'աւ-
րես, ինչ կ'ուզես քու նմանեդ որ
քեզ չէ գպեր, դուն քու ազգասի-
րութիւնդ քարոզէ, մոտիկ ընեն ա-
ղէկ, եթէ ոչ, ձանդ կտրէ, վար
նստիր: Ինչու կ'անպատուես քու եղ-
բայրդ, անոր համար որ զան կտրե-
լովդ դուն պատիւ վասակիս: Ինչ
վատ բան: Ինչ ցած հոգիութիւն:
— Օղջիք բարեկամք, զիջիք, թո-
ղէք բարկութիւննիդ կմէ գի, եկէք
սիրով ապրինք մէկտեղ:



ԲԵՐԲ ԶԵՆԱԶԱՆԵՐ

ԽՈՏԱՄԱՆԱԿԱՆ

Հոկտեմբեր ամսուան մէջ ծագկանց խնամք
(Մեր կենտրոն յարմարութեամբ հաշուութիւն)

(Օրերն ալ կ'ըսկսին ցրտանալը և

դիշերները առաւել զով ըլլալուն՝ ա-
ղէկ է որ ցուրտէ վախճող տուններդ
ներս առնես, ինչպէս են Վաթէ-
շէրը, Իպիստանէրը, Ֆիստանէրը,
Բաթէշէրը, Վաթէշէրը և և: Բաթէ-
շէրը ջերմանոցին այնպիսի
կողմը դնես որ բաւական լոյս և հով
ըլլայ. տեղերին մաքուր պահէ և ո-
ւոգումն ալ կանոնաւորէ: Թէ որ
տուններդ խիստ շատ կոկոն ունին,
կրնաս քիչցնել զանոնք. բայց ձեռ-
քով մի բրցնէր, այլ միւրատու մը՝
հորիզոնական կերպով կտրէ զանոնք
որ մանր մնացած են, և այս կէս կո-
կոնները շաբաթէ մ'ետե ինքնիրենցմէ
կը թափին և այս կերպով կը պար-
տաւորես մնացածները որ շուտ աճին:
Թէ որ կ'ուզես որ շուտ ծաղկին այն-
պիսի տեղ մը դեանդէ որ ցորենները
33 է 60 ու դիշերները 30 է 33 աս-
տիճան (Ֆարէնհայթ) տաքութիւն
ըլլայ: Զերմանոցիդ փեղկերը՝ զի-
շերները շատ ցուրտ և հոգմ ըլլայ նէ
գոցէ: Սոյնին պատերուն և սլանե-
րուն տակ այնպիսի պլլուող տուններ
տնկէ, որոնք հիմայ կ'ըսկսին ծաղ-
կել և բոլոր ձմեռ կը շարունակեն,
ինչպէս են, Ֆիլիպինա, Լալանդի-
նէ, Լոֆօֆէրմ-ժ, Մալանպիա և: Թէ որ
ասոնցմէ արդէն տնկած ունիս
նայէ որ վար կ'ախտած ճիւղերը հար-
կաւոր եղած տեղերը կտրես: Ֆիս-
տանէրը ջուրը բոլորովին կտրէ,
ու միայն երբեմն տուր, Կարմիր և
խոշոր Մալանդիլ ալ կ'ըսկսին ծաղ-
կել. առատօրէն ջուր տուր. թէ որ
ցուրտը չի գպչի բոլոր ձմեռ կը ծաղ-
կին, վասնորոյ ներս առ: Վաթէ-
շէրը (heliotrope, արեւադարձ) շա-
րէ դարաններուդ վրան, որոնք պինտ
սիրուն բուրմունք մը սփռեն ջերմա-
նոցիդ մէջ բոլոր ձմեռ. սառնք միւս
ծաղկներէ հեռու մնան՝ աւելի աղէկ
կ'աճին: Ճերմանէրը մինչև 38 աս-
տիճան կրնան դիմանալ, վասնորոյ
ասոնք ալ ներս առ, բայց նայէ որ
քովէ քով դնես, ուրիշ տեսակ ծաղ-
կանց հետ խառն մնան՝ աղէկ չեն ա-
ճիր: Կոկոնեաց (Cactus) ցեղին բոլոր
ցրտէ վախճող տեսակները ամէնէ
բարձր դարաններուն վրան դիր որ
ջուր չի տաս բոլոր ձմեռ, կամ երկու
ամիսը հեղ մը բաւական է: Շարու-
նակէ զատել փանէնէրը և Չիլի-
-

րիանէրը: Զերմանոցիդ մէջ ջուրի
պահեստ մ'ունեցիր, որով ոռոգես
ներսի տուններդ. վասնզի դուրսէն
ջուր բերել ոռոգելը վնասակար կ'ըլ-
լայ ձմեռը, մանաւանդ երբոր դրսի
բարեխառնութիւնը ներսինէն կը տար-
բերի:

Պարտիզիդ մէջ չորցած միամայ
տունները արմատախիլ ըրէ, և անոնց
տեղ ձմեռուան դիմացող տուններ
տնկէ: Ըս ամիս պիտ' ըսկըսիս ծաղ-
կոցներուդ հողերը նորոգելու ու հար-
կաւոր ըլլայ նէ՝ պարարտութիւն խառ-
նելը: Ուրիշ-ճիւղերը ալ հիմայ կա-
տարեալ փթթութեան մէջ են: Տա-
թանէրը երբոր ծաղկինին կը վերջացնեն
գրեթէ թղաչափ մը բարձր կտրէ ցո-
ղունները: Լարոպա ասոնց արմատական
եղունդները դետնէն կը հանեն ձը-
մեռ. բայց մեր օդերը բարեխառն
ըլլալուն և անձրևոց շարունակութիւն
չըլլալուն կրնանք թողուլ զանոնք
անվնաս հողին մէջ. միայն, թէ որ
ամէն տարի տեղերնին փոխես աւելի
աղէկ կը ծաղկին:

Ընցեալ ամիս տնկած Էրանտի-
նէրը և Կիսի-նէրը ալ ծլած են, երբեմն
երբեմն ջուր տուր և երբեմն հողերնին
գրգռէ որ մակերեսովը չի կարծրանայ:
Երկամայ տուններդ սերմանոցներուդ
մէջէն զատէ. աս ամիս կրնաս նաեւ
փիլանդիլ (շաքայիք, մատու-
տակ) և ֆիստանէրը և Էթիոպի-
անէրը զատել: Երկոցներուդ մէջ
խիստ շատ ճիւղաւորած տուններդ
ոտաքանց ըրէ և նեցուններով կտրէ:

ՄԱՌԵՐԱՅԻՆ

Մեր վերջին ծանօթութիւններէն
ետք բաւական դորձառնութիւններ ե-
ղան շուկանուս մէջ, որոնց գլխաւոր-
ները հետեւեալներն են:

ՏԱՐՈՒ. 4200 հակ զանազան տեսա-
կէ 238 է 232 զըշ: Մնացածը 5000
հակ մը կ'եղէ:

ԼԱՌՈՒ. Երեւելէրը 172ի ծախու-
ցան, և դրեթէ 100 սապատ մը ՀՈԼ-
լանդիլ ընկերութեան համար գնուե-
ցան 168 զըշ. մնացածը 1400 սա-
պատ է:

ՓԱԼԱՄԱՆԿ. Բաւական ապրանք ծա-
խուեցան տեսակին համեմատ 79 զըշ
մինչև 93 զըշ:

ԲՈՒՐԴ. Չիլի-այո-աճը 480 զըշ

մինչև 600 ծախուած : Պահեստը 7800
հազ մը կ'եկէ :

ԲԱՐԱՆԱԿ : Հին տեսակը 650 զըշ
մինչև 750 . նորը 820 է մինչև 850 . և
500 հակի մը չափ աւելի 820 է
մինչև 900 զըշ ծախուեցան : Գիները
հաստատ : Պահեստը հազիւ թէ 300
հազ կ'եկէ :

ԴԵՂԱՆ ՀՈՒՆՏ : Երկու հարիւր սար-
կի մը չափ ծախուեցաւ 42 զըշ 16 զըշ
հօխան : Մնացածն ալ 200 :

ԳՆՐԻ : Նոր դաշինքներ եղած 44 .
1/2 զըշ մինչև 44 . 3/4 . ողջ սակով :

ՉՈՐԹՈՒՋ : Մեր վերջին նշանա-
կածներէ ետք 6,700 բեռի չափ առ-
բանք եկաւ , և ծախուեցան , տեսակ-
նուն համեմատ , 50 է մինչև 420 ,
կենդինարը : Մինչև այսօր եկածները
գրեթէ 33 հազար բեռի կը հասնի
կամ 130,000 կենդինար , վեր - վար :

ՉԱՐԻՉ : Վերջին գիներէ քիչ
տարբերութիւն կայ :

ԱՅԳՈՅԻՆ

Նուստար Պէյ և Աղբատաւիրաց
ընկերութիւն : Զմրուինոյ Աղբատա-
ւիրաց ընկերութեան կողմէ իմաց կը
արուի մեզ , որ Եգիպտոսի փոխարքայի
քարտուղար մեծապատիւ Նուստար Պէյը
այս օրերս 'ի դարձին իւր գէյ իր
պաշտօնը , բարեհաճել է ազգասիրա-
բար 60 Օսմանեան 1 իրա շնորհելու
'ի նպատակէրոյն ընկերութեան ,
որ ինչպէս մինչև հիմայ շատ ապացոյց-
ներով հաստատեց , անխոնջ և քրիս-
տոնէաւայել վարմանը մ'ունեցաւ
քաղաքիս աղբատաւիրաց գէյ կ'ըսեն :

ՅԱՅՄ ՅԱՊԱՆԻ ԹԱԼԵՍ ԿԱՅ ՄԱՐ-
ՄԻՆ ՄԵՃԻ ԱՇԱՏ ԻՇԽԱՆԻ ՀԱՐԱ-
ՉԱՍՊԵՍԱՆ՝ ՈՐ ԵՐԻՒՐ ԱՇԽԱՐՀԱՇԻՆ
ԱՅԱՐԻՆԹԵԱՄԲԻ ԿԱՌԱՎԱՐԱՅ
ԶԱԶԳԻ ԻՐ ԱՍՏ ԲԵՆԱԿԵՍ ՅԱՐԱՆԻ
ԹԱՐԱՍՏԱՅ ԽԱՍԱՏԻԹԵԱՄԲԻ ԲԱՅՈՒ-
ԹԵԱՄԲԻ ԵՒ ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԲԱՐԵՐԱՐՈՒ-
ԹԵԱՄԲԻ ԵՒ ԱՇԽԱՐՀԱՇԻՆ ԲԱՅՈՒՄ
ԱԶԳԻՆ ԻՐԻՒՐ ԿԱՐԱՆԻՐ ՅԱՐԱ 24
ԵՒ ԼԻ ԵՐԻՒՐԵԱՄԲԻ ԿԱՐԱՆԵՅԱՆ ՍԲ
ՀԱՆԱՏՈՎ Ի ԹՈՒՆ ՀԱՅՈՑ 2Ի .
ՓԱՐԻՉ , 76 .

— Հայ Մամուլ 'ի Սուշ : Բայ
լոց Սեղու Հանգիսի , կ'իմանանք ,
որ ազգասէր Մկրտիչ վարդապետն
Խրիմեան՝ հասեր է վերոյիշեալ քա-
ղաքը , ապագրութեան մամուլ և նոյն-

նի վերաբերեալ պիտոյններով :

— Հեպեալ Կաղըրտախոյնի ինք-
րած էն : Մեր բարեկամն Լրագրա-
կիւն :

56. Nelson Street

Մէլբըրն 8 Հոկտ. Ը. Ն. 1862

Մերեւի բարեկամ

Ամերիկայ երթալու ճամբորդու-
թեան վրայ՝ 1 յոտոն 15 օր մը կե-
ցայ և սոյն քաղաքը քանի մը մաս-
նաւոր դործոց պատճառաւ դալու պար-
տաւորելով , զարմացայ մնացի երբ
' Գարուն Հայաստանին ' 1300 թիւին
մէջ կարդացի , որ " Յաւերժահարը
գծադրարար բաժանորդի պակասու-
թեան ակտին բնութեւով՝ դադարեցաւ
իր ընթացքը շարունակել " . և սկսայ
մտածել որ հիմայ որ Աշնան մէջ մը-
տած ենք , ու ծառերը սկսած են ի-
րենց տերեւները թափելու , ինչ դար-
մանալի բան որ Հայաստանի Գարուն
նը՝ իւր երկրորդ շրջանը կը սկսի այս
եղանակիս մէջ , որպէս զի իր մէջ ե-
ղած նորափթիթութիւնները եղանակէ
դուրս և բնութեան դէմ աճեցնէ .
այս անշուշտ այնպիսի հաճութիւն կը
մատակարարէ , որքան որ սեխ մ'ու-
տելը ձմեռ գիշեր մը :

Ինք շատ աղէկ գիտէ որ Յաւեր-
ժահարը դադարեցնելու պատճառը՝
բաժանորդաց պակասութիւնը չէր այլ
ճանապարհորդութիւն , ինչպէս որ ինք
ալ կ'ըսէր որ մէկն ալ ինք ըլլար , ան-
շուշտ պիտի դադարեցնէր : Զարմանա-
լի բան մ'ալ սա է որ ինչու ես իզ-
միր եղած ատենս չի գրեց ասանկ բան
մը , կարծեց որ ես հեռու ըլլալովս ,
չեմ կրնար իր պօչը օրերը արդիւնելու :
Ետիկա ատանկ գրելովս ըսել կ'ուզէ
թէ Գարունը շատ բաժանորդ ունի ,
սակայն ես գիտեմ որ ծախքին կէսը
քսակէն էր , և Գարունի պէս թերթի
մը պատիւը ամենաւ յայտնի է : Կը
խնդրեմ որ անպատճառ Դիմակիդ
մէջ անցունես այս խօսքերը : Ներ-
փակեալ կը խրկեմ Միզիլարէն ոտա-
նաւոր մը զոր թարգմանելով դնէք
Դիմակիդ մէջ :

մնամ քու բարեկամիդ

Սուրբ Գեորգի

ՀԱՐԱՊԵՏԱՍԽԱՆՈՒՐ

Կ. Պօլու : Մէլու Հարէն : Դիմում իրենց .
րեւով կը հարցանեմք . Արդեօք մոյ փեթակը
շատ կը բազմանէ թէ հին փեթակը : Դիմակ-

նուն Զգուշութիւնը վերնագրով յօդուածնե-
րուն մէջն՝ քեզի յարմարը բնորէ : Օ . Տ .
Հարհակալ եղիք մեր կողմէ՝ այն քաջամեղեթ
բարեկամն : Գ . Ե . Մ : Կը խնդրեմք գոր-
ծադիր ըլլաք :

ՃԱՆՈՒՆՈՒՐ

Սեպտեմբեր

15	Տիկին Գ. Միկայիլի Ետեան Եգ
23	" Գ. Ետեանի Գառարբան "
29	" Վ. Պէրպէր Սահակեան "
50	" Ա Միկ. Վ. Ետեանեան արու
"	" Սիմէն Սահակեան "
"	" Գառարբ. Ա. Ետեանեան Եգ
"	" Ըղատ Յօսանեան "

ՄԱԼԻՐ

Սեպտեմբեր

18	Մահակո Սարգիս Տիարեկիլի
22	Յովհաննէս Տիարեկեան .
28	Յովհաննէս Ետեանեան պատմաճի

— Եստորիոյ Իւլ գիւղաքաղաքին
տիկինները խորհրդակցութիւն մ'ըրին
որ այսուհետեւ Ֆալաֆ չի հագուին .
վասնորոյ սոյն աշնան մէջ որոշեալ
օր մը բոլոր պատուաւոր դերդաստանի
տիկինայք խօսք ըրած են որ ասանց
Ֆալաֆի դուրս ելլեն . և որպէս զի
բոլորովին ջնջեն այս սովորութիւնը ,
բոլոր թէատրոններուն գերասանու-
հացադր ըրած են որ եթէ Ֆալաֆ չ
ելլեն ատարանը՝ մէկմըն ալ ոտք չեն
կոխեր թէատրոնները :

(Ill. Lon. News.)

— Ղաբոնի մայրաքաղաքը , Ետ-
տոն , աշխարհի ամենէ ընդարձակ
քաղաքն է : Մէկուկէս միլիօն տուն
ունի , որոնց մէջ 3 միլիօն բնակիչը
կան : փողոցներուն շատը քսան երկու
մղոն երկայնութիւն ունին :

(Fl. o. o. U.)

Եստորիոյ Մէլպուրն քաղաքին
գրեթէ 420 մղոն հեռու տեղ մը ,
նոր անասի թռչող ձուկ մը գտնուե-
ցաւ , որ մէկ ոտք և հինգ բթաչափ
երկայնութիւն ունէր : Կոնակը անուշ
վարդադոյն էր , ու թեւերը իր մարմը-
նոյն համեմատելով չափազանց մեծ
էին , և վրանին անկանոն խառուալ
կութիւններ ունէին :

(Fl. o. o. U.)

ՀԱՐԱՊԵՏԱՍԽԱՆՈՒՐ
Կ. Պօլու : Մէլու Հարէն : Դիմում իրենց .
րեւով կը հարցանեմք . Արդեօք մոյ փեթակը
շատ կը բազմանէ թէ հին փեթակը : Դիմակ-